ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARCHAEOLOGY

ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ*
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
dianamirijanyan@rambler.ru
ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
hnagetyan18@gmail.com

ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԹԱՂՄԱՆ ԾԵՍՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հնագիտություն, լուսավորության միջոցներ, դամբարան, ճրագ, թաղման ծես, պեղումներ, հնավայր:*

Ներածություն

Տարբեր դարաշրջանների հուշարձանների պեղումներից հայտնաբերված գտածոների շարքում առկա են լուսավորման բազմաթիվ միջոցներ, մասնավորապես ճրագներ, որոնց մասին խոսելիս ուսումնասիրողները միշտ ընդգծել են դրանց կենցաղային կարևոր նշանակությունը: Սակայն, բացի կենցաղում կարևոր գործառույթ ունենալուց, ճրագները էական դեր են ունեցել նաև հոգևոր կյանքում, այդ թվում թաղման ծեսում:

Դիտարկումներ թաղման ծեսում կիրառվող ճրագների շուրջ

Հայաստանում հայտնաբերված ամենահին ճրագը գտնվել է Շենգավիթ բնակավայրի պեղումներից[1]: Իսկ թաղման ծեսում կիրառված ճրագ առաջին

* *Հոդվածը ներկայացվել է 01.03.2019, գրախոսվել է 01.10.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:*

[1] Шенгавит 2015, таб. 69 № 660.

անգամ հայտնաբերվել է Արթիկի № 131 դամբարանից, թվագրվում է մ.թ.ա. XIII–XII դդ. և ունի եռոտանու վրա դրված թասի տեսք[2] (նկ.1):

Ճրագները կենցաղում լայնորեն տարածվում են հատկապես ուրարտական շրջանում և հետաքրքիր է, որ միաժամանակ հայտնվում են և թաղման կառույցներում (նկ.2): Ընդգծենք, որ ճրագներ են գտնվել ինչպես շարքային դամբարաններում, այնպես և ուրարտական վերնախավի ժայռափոր կամ քարաշար կառույցներում: Վերջիններից հիշատակելի է այժմ Երևան Մոլի տարածքում գտնվող, լավ մշակված տուֆե խորանարդներով կառուցված ուրարտական դամբարանը, որտեղ բազմաթիվ խեցեղենի, զենքերի և զարդերի թվում կառույցի հյուսիս-արևելյան անկյունից հայտաբերվել է նաև միջնորմով և երկու անցքով ճրագ, որը դամբարանային ամբողջ համալիրի հետ թվագրվում է մ.թ.ա. VIII դ.[3]: Ճրագ հայտնաբերվել է նաև Աղավնաձորի ուրարտական դամբարանից:

Մ.թ.ա. VIII–VI դդ. թվագրվող ճրագով դամբարաններ հայտնի են Նորատուսի և Սարուխանի դամբարանադաշտերից[4]: Ուշագրավ է, որ Երվանդ Լալայանի՝ Արծվաքարում պեղած դամբարաններից մեկում հայտնաբերված ճրագը եղել է մանկան թաղման հետ[5]: Մ.թ.ա. VI–IV դդ. թվագրվող դամբարանադաշտերից ևս հայտնի են ճրագներ, մասնավորապես Կարճաղբյուրի № 23 դամբարանից հայտնաբերված ճրագները փաստում են, որ ձևաբանորեն դրանք փոփոխություններ չեն կրել[6]:

Գորիսի քարանձավներից մեկում հայտնաբերված հելլենիստական դարաշրջանի (մ.թ.ա. III–II դդ.) թաղման ժամանակ բազմաթիվ առարկաների հետ մեկտեղ դրվել են նաև մեծ թվով ճրագներ, որոնք հետազոտողը բաժանել է երեք խմբի[7]: Կարևոր է, որ քարանձավում կատարված մեկ թաղումն ունի լուսավորման բազմաթիվ միջոցներ, իսկ օրինակ՝ Գառնիում տարբեր տարիներին պեղված համաժամանակյա շուրջ 74 դամբարաններից[8] ու Վաղարշապատի մի քանի տիպեր ունեցող թաղումներից[9] և ոչ մեկում ճրագ չի հայտնաբեր-

---

[2] **Хачатрян** 1979, 39, 166.
[3] **Եսայան, Բիյագով, Հմայակյան, Կանեցյան** 1995, 55–56:
[4] **Ենգիբարյան** 2014, 8–9:
[5] **Լալայեան** 1906, 19:
[6] **Կարապետյան** 2003, 42:
[7] **Խնկիկյան** 1981, 309–310:
[8] **Хачатрян** 1976, 7–20.
[9] **Քալանթար** 2007, 337–341, 346–353:

վել: Աղիտու 3 քարայրում ևս հայտնաբերվել է թաղում, որին ուղեկցող գույքի թվում կա պատի մեջ դրված ճրագը[10]:

Ճրագով բազմաթիվ թաղումներ են հայտնաբերվել նաև Արտաշատի անտիկ դամբարանադաշտի պեղումների ժամանակ: Թաղումները պարունակել են մեկ կամ մի քանի ձիթաճրագ և ձևավոր ոտքերով բրոնզե ճրագակալ-աշտանակներ[11]: Աշտանակներ են հայտնաբերվել նաև Սիսիանի անտիկ դամբարանում[12]: Արտաշատի անտիկ դամբարանադաշտում պեղված 80-ից ավել թաղումներում ձիթաճրագներ հայտնաբերվել են միայն 6-ում[13]:

Դիտարկումները ցույց են տալիս, որ գերեզմաններում առկա ճրագների քանակը պայմանավորված չէ հանգուցյալների թվով: Օրինակ, Արտաշատի № 40 դամբարանից հայտնաբերվել է 3 թաղում և 3 ճրագ, իսկ ահա № 44 կարասային թաղումից հայտնաբերվել են մի քանի ճրագներ և միայն մեկ հանգուցյալի մնացորդներ[14]:

Կավե ճրագ է հայտնաբերվել նաև Հողմիկի անտիկ հնավայրում 1989 թ. բացված երկու սալարկղային թաղումներից մեկի (№ 1) հարևանությամբ[15]:

Ճրագներով թաղումներ հանդիպում են նաև վաղ միջնադարյան շրջանում, մի հանգամանք, որը կարծես թե լրիվ հակասում էր քրիստոնեական գաղափարախոսությանը, որն արգելում էր ննջեցյալի հետ իրեր դնելը:

Ճրագով վաղքրիստոնեական թաղումներ հայտնաբերվել են Լոռու մարզի Շիրակամուտ գյուղում գտնվող Չիչխանավանքի պեղումներով[16] (նկ. 3, 4): Ոսկորների ռադիոկարբոնային հետազոտությամբ դամբարանները թվագրվում են VI–VII դդ., այսինքն թաղումները վերաբերում են ոչ թե հեթանոսությունից քրիստոնեություն անցման փուլին, ինչը թույլ կտար խոսել վերապրուկային երևույթների մասին, այլև դրանք քրիստոնեական թաղումներ են: Մոտ 30 ճրագով թաղումներ հայտնաբերվել են նաև Գոգարանի Սբ. Աստվածածին եկե-

---

[10] Այս և այլ տեղեկությունների համար մեր շնորհակալությունն ենք հայտնում արշավախմբի ղեկավար, հնագետ Բորիս Գասպարյանին:

[11] **Խաչատրյան** 1981, 55–57:

[12] **Խաչատրյան** 2009, 23–25:

[13] **Խաչատրյան** 1981, 135:

[14] **Խաչատրյան** 1981, 14–15:

[15] **Հակոբյան** 2018, 240–241:

[16] **Նալբանդյան, Ալեքսանյան, Միրիջանյան** 2015, 33–46, **Նալբանդյան, Ալեքսանյան** 2011, 102–114:

ղեցու շրջակայքում[17], ինչը հավանական է դարձնում թաղման ծեսի տարածքային առանձնահատկության առկայությունը (նկ. 5):

Վաղ քրիստոնեական ժամանակաշրջանում նույնպես ոչ բոլոր թաղումներն էին պարունակում ճրագներ: Մասնավորապես, Չիչխանավանքի շրջակայքում պեղված բազմաթիվ թաղումներից մի քանիսում հայտնաբերվել են կավե տարբեր տիպերի ճրագներ: Ընդհանուր առմամբ Չիչխանավանքում հայտնաբերված շուրջ 30 ճրագներից միայն մի մասն էր թաղումներից, իսկ մյուսները գտնվեցին եկեղեցու հիմքերի մոտ (նկ. 6–9): Վաղ միջնադարում ճրագներ հանդիպում են ոչ միայն հիմնահողային թաղումներում, այլ նաև քարայրների մեջ կատարված հուղարկավորություններում: Այս տեսանկյունից շատ հետաքրքիր են Պաղեստինի Ահինոյամ քարայրում կատարված թաղումները, որոնցից չորսի պեղումներով հայտնաբերվել են 483 ձիթաճրագ և դրանց բեկորներ: Ճրագների տիպաբանության, պատկերագրության և արձանագրությունների ուսումնասիրությունը թույլ է տվել հետազոտողներին պարզելու, որ այդ քարայրների հանգուցյալները եղել են հրեաներ, որոնք աստիճանաբար IV դ.-ից դառնում են քրիստոնյաներ[18]: Հայաստանում մենք առայժմ չունենք նման ուշագրավ թաղումների օրինակներ, որոնցով հնարավոր կլիներ դիտարկումներ կատարել հեթանոսությունից քրիստոնեություն անցումային փուլի թաղումների վերաբերյալ, սակայն մեկ նմանատիպ օրինակ կարելի է համարել Արցախում՝ Խաչենագետի աջ ափին, կրաքարե ժայռի մեջ փորված եկեղեցական համալիրը՝ բաղկացած ժայռափոր եկեղեցուց, քարոզման հրապարակից և ժայռափոր գերեզմաններից: Այստեղ, 1994 թ. եկեղեցու գաղտնարանում նույնպես հայտնաբերվել է ձիթաճրագ[19]: Նշենք ճրագով թաղման մեկ այլ ուշագրավ օրինակ: 2001 թ. Թալինի տաճարից հյուսիս տեղակայված, V դ. թվագրվող միանավ եկեղեցու սալահատակի տակ հայտնաբերվել է ստորգետնյա դամբարան: Հատակագծում ուղղանկյուն շինության մեջ գտնվել է ժայռափոր աճյունափոս, որի արևմտյան կողմում հայտնաբերվել են ապակե ճրագի բեկորներ[20]:

Ննջեցյալի հետ ճրագ դնելու վաղագույն սովորույթը թեև անցավ քրիստոնեական թաղումներին, այնուամենայնիվ կրեց իմաստային փոփոխություն:

---

[17] **Նալբանդյան** 2009, 59:

[18] **Magness** 2003, 108.

[19] **Սիմոնյան, Սանամյան** 2005, 168–171:

[20] **Սարգսյան, Մելքոնյան, Նալբանդյան** 2001, 50–52: **Քալանթարյան, Մելքոնյան** 2005, 119:

Հայտնի է, որ քրիստոնեական ուսմունքի մեջ Քրիստոսը երկիր եկավ որպես լույս, խավարը ցրելու և բոլոր հավատացյալներին հավիտենական լույս պարգևելու: Այդ մասին բազմաթիվ հիշատակումներ կան Ավետարանում: «Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկուած. նրա անունը՝ Յովհաննէս: Սա եկաւ որպէս վկայ, որպէսզի վկայի լոյսի մասին, որ բոլորը նրա միջոցով հաւատան: Ինքը լոյսը չէր, այլ եկել էր, որ վկայի լոյսի մասին: Այդ լոյսն էր ճշմարիտ լոյսը, որ լուսաւորում է ամէն մարդու, որ գալու է աշխարհ»[21]: «Յիսուս դարձեալ խօսեց ժողովրդի հետ ու ասաց. «Ես եմ աշխարհի լոյսը. ով իմ յետեւից է գալիս, խաւարի միջով չի քայլի, այլ կ'ընդունի կենաց լոյսը»[22]:

Նոր Կտակարանում ամեն գաղտնի բան Տիրոջը հայտնի դառնալու համար փոխաբերական իմաստով հիշատակվում է ճրագը. «Մի՞թէ ճրագը բերւում է, որ կաթսայի կամ մահճի տակ դրուի: Չէ՞ որ աշտանակի վրայ է դրւում: Արդ, ծածուկ բան չկայ, որ չյայտնուի, եւ գաղտնի բան չի եղել, որ ի յայտ չգայ»[23]:

Այլաբանորեն ճրագը դիտվել է նաև որպես եկեղեցի[24]: Քրիստոսի վկաները ևս հանդես են գալիս որպես ճրագներ[25]:

Ինչպես վերը շարադրվածից տեսանք՝ քրիստոնեությունն իր գաղափարախոսության մեջ լայնորեն օգտագործում է ճրագը՝ լույսի ուժը ցուցելու և հավատացյալներին դեպի հավիտենական լույսն ուղղորդելու համար: Դրա համար էլ ասում է. «Վե՛ր կաց դու, որ ննջում ես, կանգնի՛ր մեռելների միջից, եւ Քրիստոս պիտի լուսաւորի քեզ»[26]:

Հավանաբար, վաղմիջնադարյան թաղումներում ճրագները դրվել են որպես հավատարմություն՝ Քրիստոսի ուսմունքին և որպես լույսի խորհուրդ, որի միջոցով պիտի հասնեին հավիտենական արքայության, ինչպես մարգարեական խոսքն է դիտվում որպես ճրագ՝ ցրելու խավարը, մինչև օրը լուսանա, և արևը ծագի հավատացյալների սրտերում[27]: Այս առումով հարկ է հիշել տասը կույսերի առակը, ըստ որի, հինգ իմաստուն և հինգ հիմար կույսեր իրենց լապ-

[21] Աւետարան ըստ Յովհաննէսի 1.1–9:

[22] Աւետարան ըստ Յովհաննէսի 8.12:

[23] Աւետարան ըստ Մարկոսի 4.21–23:

[24] Սուրբ Յովհաննէս Առաքեալի եւ Աստուածաբան Աւետարանչի յայտնութիւնը 1. 12–20:

[25] Սուրբ Յովհաննէս Առաքեալի եւ Աստուածաբան Աւետարանչի յայտնութիւնը 11. 3–4:

[26] Պօղոս Առաքեալի թուղթը Եփեսացիներին 5. 14:

[27] Պետրոս Առաքյալի ընդհանրական երկրորդ թուղթը 1.19:

տերներով դուրս էին եկել փեսային դիմավորելու և քանի որ միայն հինգ ի-մաստուն կույսերն էին ձեթի հավելյալ պաշար վերցրել՝ միայն նրանք պատ-րաստ եղան մտնելու հարսանիքի սրահը՝ Երկնքի արքայություն[28]: Գրիգոր Նարեկացին նույնպես անդրադարձ է կատարում այս թեմային. «Ի սպաս ընթ-րեացն պատրաստութեան յետնում գիշերի մեծիդ գալստեան՝ ահա զայս լոյս ճրագի համարեալ ի կիր արկանեմք» [29] կամ «Վա~յ ինձ առ նուազութիւն իւ-ղոյն լապտերաց»[30]:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Սևանի ավազանում Երվանդ Լալա-յանի պեղած թաղումներում ճրագ դրվել է միայն երեխայի դամբարանում: Այս երևույթը Ե. Լալայանը բացատրում է ազգագրական տեսանկյունից՝ նշելով, որ մինչև XIX դ. պահպանվել էր նման սովորություն, որ երեխային թաղում են ձեռքին մոմերով, որպեսզի մյուս աշխարհ գնալիս ճանապարհը լուսավոր լի-նի[31]: Բենիամինի դամբարանադաշտի երկու մանկական թաղումից ևս հայտ-նաբերվել են ձիթաճրագներ[32]: Սակայն բազմաթիվ այլ թաղումներ, որոնք ե-րեխաների չեն, ևս ունեն ճրագներ և բոլոր ուսումնասիրողները գտնում են, որ դրանք հանգուցյալների ճանապարհը լուսավորելու, հոգիները ջերմացնելու համար են[33]: Օրինակ, հրեաները լուսավորում են Շեոլի, իսկ հույները՝ Հադեսի ճանապարհը: Սակայն հետաքրքիր է մեկ այլ հանգամանք. եթե թաղումները չեն պարունակում ճրագներ, իսկ նման թաղումների թիվը շատ ավելին է, ապա ինչպե՞ս էին այդ հանգուցյալները լուսավորելու իրենց ուղին դեպի հան-դերձյալ աշխարհ: Այս առումով առայժմ կարելի է ենթադրել, որ լուսավորման կարիք ունեին միայն որոշակի խումբ ննջեցյալներ (օրինակ՝ չմկրտված կամ մահացու մեղք գործած անձինք), իսկ երեխաների դեպքում՝ ենթադրաբար բո-լորը, քանի որ փոքրերը առավել շատ ունեն մթության մեջ կողմնորոշվելու, ճշմարիտ ուղին գտնելու կարիք: Մանկան թաղման արարողության հետ կապ-ված կարևոր տեղեկություններ է հաղորդում Ե. Լալայանը՝ նշելով, որ Զանգե-զուրում ննջեցյալ երեխայի ձեռքը մոմ են տալիս, որովհետև «նա լուսի պես մաքուր է»[34]:

---

[28] Աւետարան ըստ Մատթէոսի 25.1–13:

[29] Ս. Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ՂԳ:

[30] Ս. Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան Է:

[31] **Լալայեան** 1906, 19, տողատակ:

[32] **Եգանյան** 2010, 61–62:

[33] **Կարապետյան** 2003, 32: **Philip** 2001, 370.

[34] **Լալայեան** 1898, 101:

Հետաքրքիր է, որ զարգացած և ուշ միջնադարում ևս երեխաներին հուղարկավորում էին առավել հոգածությամբ, ինչ-որ տեղ զանց առնելով նաև քրիստոնեական կանոնները: Որպես օրինակ, նշենք Անիի մեծահարուստ Տիգրան Հոնենցի տոհմական դամբարանում հայտնաբերված մանկան թաղումը: Աղջիկը հուղարկավորված է եղել մետաքսե շքեղ հագուստով, քողով և արդուզարդի այլ առարկաներով[35]: Մանկան մեկ այլ ուշագրավ թաղում բացվել է Սուրբ Հովհաննես-Կարապետի վանքի գավթի արևելյան հատվածի պեղումների ժամանակ: Քարարկղային գերեզմանի մեջ դրված փայտե դագաղին բրոնզե գամերով ամրացված է եղել կարմիր պաստառ, որն ունեցել է արծաթից ոսկեջրած բարակ լարերից պատրաստված գործվածք[36]:

Հանդերձյալ աշխարհ տանող ճանապարհը լուսավորելու վերաբերյալ ազգագրական տվյալները բազմաթիվ են: Օրինակ, Վարանդայում պահպանված ծեսի համաձայն, ննջեցյալի ձեռքերին մեկական մոմ են դնում, որի խորհուրդը հանդերձյալ աշխարհում իր բարեկամ ննջեցյալներին ճրագի լույսով տեսնելն է[37]: Հարք գավառում այն վայրում, որտեղ ննջեցյալը հոգին ավանդել է, երեկոյան սեղան է դրվում, որի վրա սովորաբար 7 ճրագամաններ են վառվում, որ կոչում են «մեռելի հոգու ճրագ»[38]: Խորհրդանշական 7 գիշեր շարունակ տանը ձիթաճրագ են վառել նաև Բորչալուի տարածքում, որպեսզի «ննջեցեալի ճանապարհը լոյս լինի»[39]: 7 ճրագ վառելու սովորությունը, հավանաբար, կապված է Աստվածաշնչյան այն գաղափարի հետ, ըստ որի, երևացող «եօթը աստղերը եօթը եկեղեցիների հրեշտակներն են, եւ եօթը ճրագակալները եօթը եկեղեցիներն են»[40]:

Ճրագի վերաբերյալ տարբեր առիթներով ակնարկներ կան Նարեկացու «Մատյան ողբերգությունում», հատկապես երբ այն ներկայացվում է որպես հոգևոր խավարը ցրելու միջոց. «Ճրագ յուսոյ քո անդ՝ եւ գիշերն վաղորդայն»[41]: Երբեմն հեղինակն իր անձն է նույնացնում ճրագի հետ. «Ամենաշէջ

---

[35] **Ժամկոչյան** 1992, 81–85:

[36] **Մելքոնյան** 2003, 217:

[37] **Լալայեան** 1897, 179:

[38] **Բենսէ** 1899, 178:

[39] **Լալայեան** 1903, 177:

[40] Սուրբ Յովհաննէս Առաքեալի եւ Աստուածաբան Աւետարանչի յայտնութիւնը 1.12–20:

[41] Ս. Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԿԵ:

ճրագարանս անլոյս»,[42] կամ «Իբր զճրագ բազմաբերանեան ի յաշտանակի մարմնիդ հաստատեցաւ գլխոյդ բոլորութիւն...»[43]:

Եթե XII–XIII դդ. խաչքարն էր դիտվում որպես քրիստոնյայի ինքնության նշան, որի օգնությամբ Փրկչի Երկրորդ գալստյան ժամանակ պետք է ճանաչելի դառնար իրական հավատացյալը[44], ապա վաղ միջնադարում, հավանաբար, Քրիստոսի ուսմունքին հետևելը ննջեցյալների հարազատները ցույց էին տալիս գերեզմանում դրված ձիթաճրագների միջոցով: Իսկ այն, որ խաչքարը դիտարկվել է դեպի Քրիստոս գնալու ճանապարհին որպես լամպ, ճրագ, փաստվում է նաև խաչքարային արձանագրություններով[45]: Ի վերջո խաչի՝ որպես լույս-ճրագի էությունը սկսվում է արտահայտվել նաև խաչքարային պատկերաքանդակներում, Ջուղայի խաչքարերում պատկերվող հանգուցյալների ձեռքերում եղած «մոմե խաչերի» տեսքով[46]: Խոսքը երկու հատվող էլիպսներից կազմված խաչերի մասին է, որոնք ըստ Ա. Վրույրի հավաքած փաստերի, պատրաստվել են մոմից և դրվել հանգուցյալի ձեռքերում[47]: Ըստ հնագետ Հ. Պետրոսյանի այդ «...մոմե խաչերը նույնպես միտված էին ցուցել ժամանակների վերջի իրական-լուսային խաչը»[48]:

Այսպիսով, անցյալից եկող և մահվան հետ առնչվող բազմաթիվ պատկերացումներ պահպանվում են դարեր շարունակ: Բոլոր դարաշրջաններում մահվանից հետո դեպի հաջորդ կյանք տանող ուղին պատկերացրել են որպես մի մութ և վտանգավոր ճանապարհ, որը պետք է լուսավորվեր ճրագներով: Քրիստոնեությունը փոխեց մարդկանց պատկերացումները հանդերձյալ աշխարհի մասին, քանզի դրանց համեմատ Քրիստոսն ինքն է լույսը և դեպի այն գնալու համար անհրաժեշտ է միայն հետևել նրա ուսմունքին և երկնային կյանքում վայելել Աստծո հովանավորությունը:

---

[42] Ս. Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԼԹ:
[43] Ս. Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԽԶ:
[44] **Պետրոսյան** 2005, 199:
[45] **Պետրոսյան** 2005, 200–203:
[46] **Պետրոսյան** 2005, 203
[47] **Պետրոսյան** 2008, 232: **Վրույր** 1967, 177:
[48] **Պետրոսյան** 2005, 203:

Եզրակացություններ

Տարբեր դարաշրջաններով թվագրվող հուշարձանների պեղումներից տարատեսակ հնագիտական առարկաների թվում առանձնահատուկ տեղ ունեն լուսավորության միջոցները, մասնավորապես ձիթաճրագները: Կենցաղում լայնորեն կիրառվելուց զատ՝ ճրագները էական դեր են ունեցել նաև հոգևոր կյանքում, այդ թվում թաղման ծեսում: Մ.թ.ա. XIII–XII դդ. սկսած՝ դամբարանային կառույցներում դրվել են ճրագներ, որոնք ենթադրաբար ունեցել են հանգուցյալի՝ այլ աշխարհ տանող ճանապարհը լուսավորելու գործառույթ: Ճրագներով թաղումներ հայտնաբերվել են նաև ուրարտական, հետուրարտական, հելլենիստական ժամանակաշրջաններում:

Քրիստոնեության հաստատմամբ փոփոխություններ կատարվեցին ամենապահպանողականը համարվող թաղման ծեսում, հանգուցյալի հետ իրեր դնելու մեջ: Սակայն հնագիտական պեղումները փաստում են, որ քրիստոնեության առաջին դարերում շարունակել են տարբեր առարկաներ, այդ թվում ճրագներ դնել թաղման կառույցներում: Մասնավորապես Լոռու մարզի Չիչխանավանքի և Գոգարանի եկեղեցիների շրջակա գերեզմանների պեղումներով հայտնաբերվել են մի քանի տասնյակ ճրագներ, որոնք թվագրվում են VI–VII դդ.:

Հոդվածում փորձ ենք արել քրիստոնեական թաղումներում ճրագների առկայությունը բացատրել այն հանգամանքով, որ թեև ննջեցյալի հետ ճրագ դնելու վաղ սովորույթը անցավ քրիստոնեական թաղումներին, այնուամենայնիվ կրեց իմաստային փոփոխություն: Հայտնի է, որ քրիստոնեական ուսմունքի մեջ Քրիստոսը երկիր եկավ որպես լույս, խավարը ցրելու և հավիտենական լույս պարգևելու բոլոր հավատացյալներին, ինչի մասին բազմաթիվ վկայություններ կան Ավետարաններում: Այլաբանորեն ճրագը դիտվել է նաև որպես եկեղեցի: Քրիստոնյաները ևս հանդես են գալիս որպես ճրագներ, ուստի եզրակացրել ենք, որ վաղմիջնադարյան թաղումներում ճրագները դրվել են որպես հավատարմություն Քրիստոսի ուսմունքին և որպես լույսի խորհուրդ, որի միջոցով հանգուցյալները պիտի հասնեին հավիտենական արքայության:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բենսէ 1899, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Մահ ու թաղում, Ազգագրական հանդէս, Ե գիրք, Թիֆլիս, էջ 8–184:

Գրիգոր Նարեկացի 1996, Մատեան ողբերգութեան, Երևան, «Նաիրի», 388 էջ:

Եգանյան Լ. 2010, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ, I, Երևան-Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 193 էջ:

Ենգիբարյան Ն., 2014, Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. VIII–VI դդ. (ըստ դամբարանային համալիրների), գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 27 էջ:

Եսայան Ս., Բիյագով Լ., Հմայակյան Ս., Կանեցյան Ա. 1995, Երևանի բիայնական դամբարանը, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 16, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 55–79:

Ժամկոչյան Ա. 1992, Կիրառական արվեստի նմուշներ Անիից (ըստ Տիգրան Հոնենցի տոհմական դամբարանի նյութերի), Անի, № 3–4, Երևան, էջ 81–85:

Լալայեան Ե. 1903, Բորչալուի գաւառ, Մահ, թաղումն և մեռելոց, Ազգագրական հանդէս, X գիրք, Թիֆլիս, էջ 112–168:

Լալայեան Ե. 1898, Զանգեզուր, Մահ, թաղումն և մեռելոց, Ազգագրական հանդէս, Դ գիրք, Թիֆլիս, էջ 7–117:

Լալայեան Ե. 1906, Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդէս, գիրք XIV, Թիֆլիս, էջ 5–37:

Լալայեան Ե. 1897, Վարանդա, Մահ, թաղումն և մեռելոց, Ազգագրական հանդէս, Բ գիրք, Թիֆլիս, էջ 4–244:

Խաչատրյան Ժ. 1981, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971–1977 թթ. պեղումները), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 204 էջ:

Խաչատրյան Ժ. 2009, Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դ. երկրորդ կես), Հայաստանի հնագիտական հուշարձանները, պրակ 21, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 100 էջ:

Խնկիկյան Օ. 1981, Նորահայտ հուշարձան Գորիսում, Պատմա-բանասիրական հանդես, № 4, Երևան, էջ 305–314:

Կարապետյան Ի. 2003, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI–IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, պրակ 19, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 110 էջ:

Հակոբյան Հ. 2018, Ծիսական սպանության դրսևորումները անտիկ դարաշրջանի Շիրակի հնավայրերում, Արագածի թիկունքում, Հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 239–252:

Մելքոնյան Հ. 2003, Սուրբ Հովհաննու Կարապետի վանքը, Հանդէս Ամսօրեայ, № 1–12, «Մխիթարեան», էջ 189–250:

Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ. 2015, Չիչխանավանք, Երևան, 87 էջ:

Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ. 2011, Չիչխանավանքի 2008–2010 թթ. պեղումների նախնական արդյունքները, Հուշարձան, պրակ 7, Երևան, էջ 102–114:

Նալբանդյան Ս. 2009, Գոգարան, «Ճարտարապետություն, շինարարություն», № 3, Երևան, էջ 58–64:

Նոր Կտակարան, Աւետարան ըստ Յովհաննէսի:

Նոր Կտակարան, Աւետարան ըստ Մարկոսի:

Նոր Կտակարան, Աւետարան ըստ Մատթէոսի:

Նոր Կտակարան, Սուրբ Յովհաննէս Առաքեալի եւ Աստուածաբան Աւետարանչի յայտնութիւնը:

Նոր Կտակարան, Պետրոս առաքյալի ընդհանրական երկրորդ թուղթը:

Նոր Կտակարան, Պօղոս առաքեալի թուղթը Եփեսացիներին:

Պետրոսյան Հ. 2005, Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը, Հայոց պատմության հարցեր, գիտ. հոդվածների ժող., թիվ 6, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., էջ 195–215:

Պետրոսյան Հ. 2008, Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 406 էջ:

Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Նալբանդյան Գ. 2001, Թալինի միանավ եկեղեցու նորահայտ ստորգետնյա դամբարանը, Քրիստոնյա Հայաստանի արվեստը, միջազգային գիտաժողովի զեկ. թեզ., Երևան, էջ 50–52:

Սիմոնյան Հ., Սանամյան Հ. 2005, Վանքասարի հուշարձանները, Հուշարձան Գ, Երևան, էջ 159–177:

Վրույր Ա. Արամ Վրույրի «Ջուղա» հնագիտական անտիպ ակնարկը, 1967, Պատմաբանասիրական հանդես, Երևան, № 4, էջ 169–180:

Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ. 2005, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990–2003 թթ., Երևան, «Մուղնի», 119 էջ:

Քալանթար Ա. 2007, Հին Վաղարշապատի պեղումները, Հայաստան, քարեդարից միջնադար, Երկերի ժողովածու, Գիտական ժառանգություն, հ. 4, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 317–359:

Хачатрян Т. 1979, Артикский некрополь, каталог, Ереван, ЕГУ, 403 с.

Хачатрян Ж. 1976, Гарни V. Античный некрополь (результаты раскопок 1956–1972 гг.), Археологические раскопки в Армении, 15, Ереван, АН АрмССР, 134 с.

Шенгавит 2015, Каталог археологических материалов из коллекций Музея истории Армении, составители **Бадалян Р., Овсепян С., Хачатрян Л.,** Ереван, Музей истории Армении, 245 с.

Jodi Magness 2003, The Archaeology of the Early Islamic Settlement in Palestine, vol. 1, Indiana, Eisenbraus, 248 p.

Philip J. King & Lowrence E. Stager 2001, Life in Biblical Israel, London, Westminster John Knox press. 440 p.

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

СРЕДСТВА ОСВЕЩЕНИЯ В ПОГРЕБАЛЬНОМ РИТУАЛЕ

МИРИДЖАНЯН Д., НАЛБАНДЯН А.

Резюме

***Ключевые слова**: археология, средства освещения, гробницы, лампы, погребальный ритуал, раскопки, поселение.*

Погребальный ритуал дохристианской Армении предусматривал захоронение, вместе с усопшим, различных предметов (керамики, оружия, украшений), в том числе и масляных ламп. Согласно поверьям, умерший мог использовать их в загробной жизни. Христианское учение изменило представления о царстве Аида. По этим представлениям все равны перед Богом, независимо от их социального положения и способностей.

Однако обычай захоронения некоторых предметов сохранился в ритуале христианского погребения. К их числу относятся средства освещения, в частности, масляные лампы, которые, появившись в погребальных соору-

жениях еще в VIII веке до нашей эры, получили широкое распространение в эллинистический период. Этот обычай сохранился вплоть до раннего средневековья.

LIGHTING OBJECTS IN BURIAL RITUAL

MIRIJANYAN D., NALBANDYAN A.

Summary

Key words: *Archeology, lighting objects, tombs, lamp, funeral rites, excavations pre – Christian tradition.*

In pre-Christian Armenia the burial ritual of the deceased included the act of burying various objects (pottery, weapons and jewelry) as well as oil lamps in the site. According to the common beliefs, the deceased would use them in the afterlife. The Christian teaching changed the perceptions about Hades' world. According to Christian doctrines, everyone is equal in the eyes of God, irrespective of their social standing and ability.

However, the custom of burying some objects remained in the Christian burial ritual. Lighting objects, particularly oil lamps, are among them, which having become widespread in Hellenic period, were found in the burial structures back in the 8th century BC. Such ritual practices survived up to the early Middle Ages.